



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**


N 114 - Ա
31 մայիսի 2012 թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 56 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1797-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կանոնադրության>> 30-րդ կետը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2003 թվականի մայիսի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի վարչության կանոնադրությունը հաստատելու մասին>> N 56 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
 - 1) որոշման վերնագրում և որոշման մեջ << , սպորտի և երիտասարդության հարցերի>> բառերը փոխարինել <<և սպորտի>> բառերով.
 - 2) որոշմամբ հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից.



Ն. ԳՈՂՈՍՅԱՆ

Կ Ա Ն ՈՆ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը (այսուհետև՝ Վարչություն) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի (այսուհետև՝ Աշխատակազմ) կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Վարչությունը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:
3. Վարչությունը գործում է իր կանոնադրության համաձայն, որը հաստատում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետը (այսուհետև՝ Մարզպետ):
4. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի (այսուհետև՝ Մարզպետարան) կանոնադրությամբ, ինչպես նաև Մարզպետի որոշումներով և կարգադրություններով, Աշխատակազմի ղեկավարի հրամաններով, ցուցումներով, Մարզպետի՝ բնագավառը համակարգող համապատասխան տեղակալի ցուցումներով և հանձնարարականներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:
5. Վարչությունն իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է աշխատանքային ծրագրերով: Վարչության տարեկան ծրագիրը հաստատվում է Մարզպետի կողմից:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

6. Վարչության հիմնական խնդիրներն ու նպատակներն են՝
 - 1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կրթության, մշակույթի և սպորտի բնագավառներում Մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին Մարզպետի մասնակցության ապահովումը:

- 2) Հայաստանի Հանրապետության կառավարության՝ կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում տարածքային քաղաքականության իրագործմանն ուղղված աշխատանքների կատարման ապահովումը.
- 3) մարզային ենթակայության պետական ուսումնական, մշակութային և մարզական հաստատությունների գործունեության կազմակերպման ապահովումը.
- 4) մարզի տարածքում գործող մանկապատանեկան մարզադպրոցների, հանրակրթական դպրոցների, մարզական հերթափոխի պատրաստման, մարզաձևերի զարգացման և ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործընթացի համադասումը:
7. Վարչությունն իր հիմնական խնդիրներն ու նպատակներն իրականացնում է կրթության, մշակույթի և սպորտի բաժինների միջոցով:
8. Վարչությունը կրթության բնագավառում՝
 - 1) ապահովում է մարզի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացումը.
 - 2) վերահսկում է նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը.
 - 3) վերահսկում է ուսումնական հաստատությունների կողմից կրթական ծրագրերի իրականացումը՝ հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան .
 - 4) համակարգում և վերահսկում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումը ուսումնական հաստատություններում.
 - 5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով անցկացնում է պետական ուսումնական հաստատության տնօրենի և մանկավարժական աշխատողի ատեստավորումը.
 - 6) աջակցում է ուսումնական հաստատություններում սովորողների և շրջանավարտների գիտելիքների գնահատման կամ թեստավորման գործընթացին.
 - 7) համակարգում և վերահսկում է մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունները անհրաժեշտ դասագրքերով, ուսումնամեթոդական ձեռնարկներով ու նորմացույց փաստաթղթերով ապահովելու գործը.
 - 8) իրականացնում է մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսումնագիտական և մեթոդական տեղեկատվության ապահովման գործը: Կազմակերպում է ղեկավար ու մանկավարժական աշխատողների խորհրդակցություններ, գիտաժողովներ, մանկավարժական ընթերցումներ, ուսումնասիրում և ամփոփում է կրթական հաստատությունների ղեկավարների և մանկավարժական աշխատանքի օրինակելի փորձն ու կազմակերպում դրա ներդրումը, տարածումը.
 - 9) կազմակերպում է առարկայական օլիմպիադաներ, մարզամշակութային միջոցառումներ, մրցույթներ, աշխատանք է տանում երեխաների հանգստի ու ժամանացի կազմակերպման ուղղությամբ.

- 10) առողջապահական հիմնարկների հետ համատեղ ուսումնասիրում է մարզային ենթակայության կրթական հաստատություններում երեխաների առողջության պահպանման համար համապատասխան պայմանների ապահովման և անհրաժեշտ միջոցառումների իրականացման գործընթացը և առաջարկություն ներկայացնում մարզպետին.
- 11) աջակցում է անապաստան, ծնողազուրկ և կրթություն ստանալու համար պետական հովանավորության կարիքն ունեցող երեխաներին ուսման մեջ ընդգրկելու աշխատանքներին՝ համագործակցելով մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ.
- 12) առաջարկություն է ներկայացնում մարզպետին, աշխատակազմի ղեկավարին մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի կառուցման, պահպանման, շահագործման, ինչպես նաև շրջակայքի բարեկարգման, սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման ուղղությամբ.
- 13) մշակում և մարզպետին ու աշխատակազմի ղեկավարին է ներկայացնում մարզի կրթական հաստատությունների զարգացման տարեկան և հեռանկարային ծրագրերի նախագծերը.
- 14) աշխատանք է տանում մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունները մանկավարժական կադրերով համալրելու ուղղությամբ.
- 15) աջակցում է կրթական հաստատությունների ղեկավար աշխատողների և մանկավարժների վերապատրաստման աշխատանքների կազմակերպմանը.
- 16) սահմանված կարգով նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում կազմակերպում է ուսումնասիրություններ: Ըստ անհրաժեշտության՝ մասնակցում է դասերի, պարապմունքների, քննությունների անցկացման և կազմակերպման աշխատանքներին, կրթական հաստատություններում կազմակերպվող այլ միջոցառումներին.
- 17) վերահսկում է մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ընդունելության, սովորողների գիտելիքների գնահատման համակարգի, առաջադիմության ու հաճախումների գրանցման, դասարանից դասարան փոխադրման, ինչպես նաև ավարտական քննությունների անցկացման գործը.
- 18) կազմակերպում և համակարգում է ավարտական վկայականների, ատեստատների ստացման և բաշխման աշխատանքները.
- 19) աջակցում է մարզի տարածքում գործող կրթության զարգացման կենտրոնների, ավագ դպրոցների և այլ կրթական հաստատությունների գործունեությանը.
- 20) մինչև մարզպետի հաստատմանը ներկայացնելը օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցում է դպրոցի ամենամյա ծախսերի նախահաշվի, հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակների ներկայացման օրինականության ուսումնասիրության աշխատանքներին և առաջարկություն է ներկայացնում մարզպետին:

9. Վարչությունը մշակույթի և սպորտի բնագավառում՝

- 1) կազմակերպում է մարզային ենթակայության մշակութային և սպորտային հաստատությունների աշխատանքը.
- 2) կազմակերպում է մարզում մշակութային և սպորտային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումներ.
- 3) նպաստում է ավանդական, ազգային ծեսերի վերականգմանն ու տարածմանը.
- 4) մարզպետի հանձնարարությամբ վերահսկում է մարզի տարածքում գործող ոչ պետական մշակութային և սպորտային կազմակերպությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը.
- 5) իրականացնում է օրենքով սահմանված լիազորություններ մարզի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ.
- 6) առաջարկություն է ներկայացնում մարզպետին և աշխատակազմի ղեկավարին մարզային ենթակայության մշակութային և սպորտային օբյեկտների կառուցման, ինչպես նաև մարզում հանգստի գոտիների ստեղծման, պահպանման և շահագործման վերաբերյալ.
- 7) համագործակցում է մարզի տարածքում գործող պետական գրանցում ունեցող կրոնական կազմակերպությունների հետ.
- 8) կազմակերպում է մարզային ենթակայության մշակութային և սպորտային հաստատությունների ղեկավարների, մասնագետների, մարզիչ-մանկավարժների խորհրդակցություններ, գիտաժողովներ, ուսումնասիրում և ամփոփում է այդ հաստատությունների աշխատանքային գործունեությունը. կազմակերպում է օրինակելի փորձի ներդրումը և տարածումը.
- 9) կազմակերպում է երիտասարդության հարցերին առնչվող խորհրդակցություններ, քննարկումներ, տարբեր թեմաներով ընթերցումներ, համագործակցում է երիտասարդական կազմակերպությունների և միավորումների հետ.
- 10) մշակում և Մարզպետի հաստատմանն է ներկայացնում մարզի տարածքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման առաջնային ուղղությունները, մասնակցում է մանկապատանեկան սպորտի զարգացման ծրագրի մշակմանը.
- 11) աջակցում է մարզական կազմակերպությունների հանրապետական առաջնություններին, միջազգային մրցումներին մարզի և համայնքների մարզիկների ու թիմերի մասնակցությանը.
- 12) աջակցում է մարզի և համայնքների տարածքում բնակվող մանուկների ու պատանիների մասնակցությանը ֆիզկուլտուրային-մարզական միջոցառումներին.
- 13) աջակցում է մարզի և համայնքների տարածքում մանկապատանեկան սպորտի զարգացմանը, պետական իրավասու մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ և համաձայնեցված գործողությանը.
- 14) համակարգում և իրականացնում է մարզի մանկապատանեկան սպորտի զարգացման պետական ծրագրերը և հսկողության է իրականացնում մարզի տարածքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ծրագրերի

իրագործման ուղղությամբ: Իր լիազորությունների շրջանակում ապահովում օրենսդրության պահանջների կատարումը:

10. Վարչությունն իր հիմնական խնդիրների իրականացման և կազմակերպման գործում ներգրավում է հասարակայնության, համայնքների, ձեռնարկությունների, հասարակական, բարեգործական կազմակերպությունների ուժերը և սերտորեն համագործակցում մարզպետարանի աշխատակազմի մյուս կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների և հիմնարկների հետ:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11. Վարչության աշխատանքները կազմակերպվում են վարչության պետի, վարչության պետի տեղակալի, բաժինների վարիչների և վարչության մյուս աշխատակիցների (այսուհետև՝ վարչության աշխատողներ) կողմից, որոնք պաշտոնի են նշանակվում և ազատվում են պաշտոնից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
12. Վարչության աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, քաղաքացիական ծառայության դասային աստիճանի, ինչպես նաև իրենց անմիջական ենթակայության տակ գտնվող քաղաքացիական ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվում կարգով արտահերթ ատեստավորելու, վերապատրաստելու, կարգապահական տույժի ենթարկելու և խրախուսելու հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:
13. Վարչության աշխատողները ապահովում են Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության և մարզպետի որոշումների ու կարգադրությունների, այլ իրավական ակտերի, աշխատակազմի ղեկավարի հրամանների ու հանձնարարականների, իրենց անմիջական ղեկավարի և նրա վերադաս պաշտոնատար անձանց օրենսդրությամբ սահմանված կարգով տրված հանձնարարականների կատարումը և պատասխանատվության են կրում դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ լիազորությունները վերազանցելու համար:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Վարչության ընթացիկ գործունեությունը օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է վարչության պետը:
2. Վարչության գործունեությունն իրականացվում է աշխատանքային ծրագրերին համապատասխան:
3. Վարչության աշխատանքային ծրագրերը կազմվում են յուրաքանչյուր տարվա համար հունվար-դեկտեմբեր ամիսների ընդգրկմամբ, ըստ կիսամյակների և հաստատվում են աշխատակազմի ղեկավարի կողմից:

✓

